



Տ. ՎԱՀԱԳՆ ԲՀՆՅ. ՄԻՆԱՆԵԱՆ

Տէր Վահագն Բհնյ. Մինանեան (աւագանի անուն՝ Արմէն) ծնած է Հայաստան՝ Գորիսի շրջանի Բարսիւնէ գիւղին մէջ: Զաւակն է Տէր եւ Տիկին Սեդրէ եւ Սուվարդ Մինանեաններու: Նախնական կրթութիւնը ստացած է գիւղի միջնակարգ դպրոցին մէջ, որն աւարտելէ վերջ ընդունուած է Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարան: 5 տարի ուսանելէ եւ Վարժարանը աւարտելէ վերջ իր ցանկութեամբ եւ վանական իշխանութեան հաւանութեամբ ընդունուած է իբրեւ միաբան՝ Բեթղէիէմի Սբ. Ծննդեան Տաճարին մէջ: Երեք ու կէս տարի ծառայելէ վերջ Աստուծոյ կամքով 2005 թուականի Փետրուար 6-ին ձեռնադրուած է քահանայ ձեռամբ Պատրիարք Սրբապան Հօր: